

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

Ա Ջ Դ Մ Ա Ն Ց Մ Տ Ա Ց Ե Ի Ս Ր Տ Ի

1 8 4 2

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

21

Սէր, քոյր անմահութեան:

25

Սիրտ ծփի և յայն ինչ լուել հողմոց:

26

Ին ժամը կենաց՝ որ զամենայն զան-
ցեալ կենաց վիշտս կշռեն:

26

Են անձինք կարևորք մեզ իբրև զձեռս.
անմարթ է անվէր փնալ ի մահու նոցին:

31

Եւ զոր կատարեալ կարծես դու և այլք
վկայեն, կայ որ և զայն արհամարհէ:

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

2

Թեւ կենաց յորժամ լուծանի պատատի
ի կծիկ մահուն. ոմանց այնպէս կարճ է
թել, զի հազիւ ման մի առնու ի ճախա-
րակին:

4

Քաղցրիկ վանգիւնք զանգակին կոչեն
զհաւատացեալս յեկեղեցի, որպէս համ-
քոյր խոխոջը առուակի զծարաւեալն յար-
բումն:

4

Ի համատարած խաղաղութեան սրտի
և բան մի վերահաս վեր ի վայր յուզէ:

4

Սիրտ մանկութեան քարտէզ անգիր
կազմ յընդունել զոր և է տիպս. ձեռն
անզգոյշ, մի՛ հուպ լինիր:

6

Հայելի խաղաղ դէմք մեռելոյ, հայեաց
ուշով, և բազում ինչ նկատիցես:

6

Ի մահուանէ մի՛ փախչիր, զի նա ու-
նի զամենայն անցս, և ի գլուխս ճանա-
պարհաց դարանեալ նստի:

6

Նախանձոտն ամենեցուն նախանձի. և
չիք որ չատիցէ զնախանձոտ:

6

Ոչ ամենայն որ զլի ի ծով՝ ընկղմի:

7

Աստուած բազմավրդով երկրիս մերոյ
տեսուչ կայ. հրեշտակաց յանձնեալ զխա-
ղաղական աշխարհս երկնից:

10

Ի կապուտային մագաղաթ զլուսայեռ
գիրս աստուածեանս աջոյն ընթեռնու աս-
տեղադէտն զոգեալ ապակօք:

10

Որ զականաւոր օրինակազրաց ընթեր-
ցեալ մատենան՝ ի վարկաբարձի մատենանս
անցցէ, նա որպէս մեղու թողու զբուրաս-
տան և ի դաւարիս թեւածէ:

10

Առաքինութիւն վշտատեսի և զրկելոյ՝
նման է վարդի ի փշուտս:

11

Սիրտ լցեալ կրիւք ուրախութեան կամ
տրտմութեան՝ զնայ որպէս ամբ ուռուցիկ,
և ուր և հողմոյ դիպեցիք անդ պայթէ:

11

Յոյս, անստոյգ ցանկութիւն ըղձաւոյ:

11

Տրտմութիւն առաւել ի կամս և ի տը-
կարութեան մարդոյ է, քան յարկածիցն:

11

Մարդիկ թէ՛ քան զծաղկակալն չէ՛ ազ-
նիւ՝ չէ՛ ծաղիկ:

11

Քանի՛ սակաւք են որ նշմարիցեն զան-
ջըրպետ յուսոյ և ըզձից:

11

Եթէ սիրով Աստուած մարդացաւ, նո-
վին և մարդ աստուածացի:

Բարձր է Աստուած և մարդ խոնարհ,
նա սիրով խոնարհի սա սովին բարձրա-
նայ և զան ի մի հաւասարութիւն:

11

Յարգարունն զքօսեցուցանէ, պարզն
յափշտակէ որպէս շուշան կամ աղանի:

13

• Մեղաւորն ջանայ և չկարէ փախչել
ի մեղաց, զի ինքն է անօթ մեղաց:

13

Թշուառութիւնը բազում անգամ շղթա-
յաշար գան գհետ իրերաց:

13

Ողկոյզը կախեալը՝ արբեցութեան դա-
յեակը:

13

Ուռնիք զջուրս համբուրեն, կնձնիք
յողս թեապարեն:

18

Աշխատութիւն միանգամ խոնջեցուցա-
նէ, դատարկութիւն հանապազօր:

18

• Բազում անգամ դոյզն մակոյկ փրկէ
զկորուստ մեծալատտ նաւուն:

21

Մխիթարիչ ի մէջ սգաւորաց, սին ի
ծառս հողմակոծեալս:

21

Ի բեկորոց միոյ նաւու տասն նաւակը
կանգնին:

21

Մահիճ հիւանդի՝ նախագերեզման:

23

Են յեղյեղուկը լեզուաւ որպէս զրիչը
հուպ ընդ հուպ հատեալ զմէլինաւ:

24

Ա՛հ, ընդ մահ միոյ քանի՜ սիրտը խո-
ցին:

24

Թաւուր մահուան մտերմին յօրհաս մը-
տանէ բարեկաթն:

24

Ձիւր շղթայ ամուր քան զցաւ սգաւորի:

24

Անձկութիւն հուր է անծախ. է ուրեք
զի ծածկի ընդ մոխրով կեղծ անդորրու-
թեան. այլ դու մի՛ հաւատար. մոխիրն
այն տածիչ լինի քան շիջուցիչ:

24

Խայթից օձի և կարճի գտի դեղ ի բու-
սոց, այլ տրտմութեան և ցաւոց ոչ բնաւ:

Բայց թէ նշխարը փայտին յոր Յիսուս
ննջեաց:

24

Արդ մահ տիրեաց խմայ... զառ ի
յաստեաց գերութիւնս մահու՝ անդ ազա-
տագրէ Քրիստոս. այլ մինչչև գերեալ՝ ոչ
լիցի ազատութիւն:

24

Օրհաս վերջին ճանապարհ է կենաց.
են որը ի մի քայլ հատանեն անցանեն:

24

Թաճախ ընդ մահ այլոց զմեր կեանս
լամբ:

24

Չուրախութիւն սրտի կարացի հեղուկ
բերանով, այլ տրտմութեան՝ զքարտէն գտի
ընդունակ. բազում անգամ եղև աման
ցաւոց:

25

Բազում անգամ ի ջաղիսել զգլուխ վի-
շապ ցաւոյն, տասն ընդ միոյ վերաբու-
սանի:

25

Եղիցին կամք քո... զայս վահան ան-
վրկանդ ի յետին մարտին եթող մեզ Յի-
սուս ռեմոն:

25

Տրտմութիւն պատուար է ընդդէմ ըղ-
ձից:

25

Գործեա ի հանդս այլոց, այլ մի՛ վասն
հաճութեան:

25

Որպէս ծանր մարմին միեալ ի ջուր
զթեթեւ յամանոյն արտաքս թափէ, այս-
պէս եթէ սպողիցէ տրտմութիւն ի սիրտ:

26

Ի զուր մեռելոյն ամփոփին սիրտը թաղ-
ծեալը որպէս սափորը արտասուալիցը:

26

Երանի որ զվերին երես միայն ըմպիցէ
կենաց բաժակին, զի այն միայն է մեղր:

26

Մաղիկ յամանի արագախամուր լինի,
իսկ ի պարտիզի տնկեալ՝ յերկար պահէ
զհոտ իւր: Մայր վշտագին, որդին քո ծա-

դիկ էր յամանի, արդ տնկեցաւ յԱղին: Աստ զհոտն միայն վայելեր հարեանցի, անդ զհոտն և զպտուղ՝ յաւերժ:

26

Արծուապէս մերկանայ զվաղանցիկ ա-
մաց փետուրս, զգենու զթեւ հրեշտակաց:

26

Թուի վաղամեռիկն հոգի եկեալ տեսա-
նել զուշայնութիւնս աշխարհի՝ և արհա-
մարհեալ թուչել:

26

Մահ տնկէ յոգուջ զյոյս անմահութեան:

26

Որպէս սպունգ ծծէ սիրտ զդիւրագգած
անձուկս, այլ անխլիրտ և անշշունջ կայ:

27

Ոչ ամենայն վէր սպեղանեօք բուժի.
այլ է զոր պատառել և զթոյնն ի բաց
հանելի է:

29

Վէժ տապանի՝ վէժ անկիւնակալ հա-
ւատոյ և յուսոյ յորոյ վերայ կանգնի տա-
հարն սիրոյ:

29

Իբրև զնամակ մի կնքեալ կայ սիրտ
իմ. ի լուծանել կնքոյն քանի՜ զարմանա-
լիք յայտնեսցին:

Հ. Ղ. ԱՆՇԱՆ

Շարայարեյի



Փ Ա Ր Պ Ե Յ Ի Ո Յ Թ Ո Ի Ղ Թ Ի Ն

ՎԱՍԵՐԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ

Բազմավեպի փետրուարի համարին մէջ
Հ. Յ. Ազգերեան (էջ 59) շանացած էր
ապացուցանել՝ թէ փարպեցւոյ թուղթը
յատկեբեռնէ թարգմանուած է, (հաւանօրէն
իրեն բնագիր ունենալով Ոսկեբերանի լա-
տին նամակ մ'առ իննովկենսիտո Ա). իբրև
փաստ ի մէջ բերելով անհասկանալի ըն-
թեքցումներ՝ որ յատկե. բառերու սխալ
թարգմանութիւն մը կ'ենթադրեն: Իր տե-
սակէտը բոլորովին նոր է, տեսութիւննե-
րը՝ սրամիտ. բայց սխալ պիտի ըլլայ կար-

ծել թէ այդպիսի եզրակացութիւն մը կա-
րելի է ընդունիլ՝ առանց ո'չ մէկ դժուա-
րութեան կամ առարկութեանց:

Փարպեցի կ'ըսէ. (էջ 570)

« Եւ ես անպիտանս և ամենեցուն
կղկղանց՝ թէպէտե երևիցիմ առաջի Տեառն՝
սոն եղեալ որդի, իբրև զանգամ՝ որպէս
մեծ առաքեալն Պօղոս »:

Հ. Ազգերեան կ'ենթադրէ թէ սոն եղեալ
որդի թարգմանութիւն է լատ. filius fac-
tus hominis բացատրութեան, ուստի
փարպեցին հասկնալու է այսպէս. « առա-
ջի Տեառն՝ որդայ մարդոյ »:

Բայց կ'առարկենք.

1) Թեպէտե մակբայն ցոյց կու տայ թէ
միջանկեալ բացատրութիւնը՝ նախորդին
հակառակ իմաստ մը ունի. բայց որդայ
մարդոյ բացատրութեամբ՝ փարպեցին ու-
շինչ աւելի կը ստանայ քան « անպիտան
և անզգամ » մակղիրները:

2) Իմաստը ո'չ մէկ կերպով կը պա-
հանջէ հոս որ Տեառն բառէն վերջ « Որ-
դի մարդոյ » բացատրութիւնը աւելցուի:

Ընդհակառակն բնագիրը շատ պարզ է
արդէն երբ անվրդով իր վիճակին մէջ
թողուի. փարպեցին կ'ըսէ. « Եւ ես ան-
պիտանս և ամենեցուն կղկղանց՝ թեպէտե
երևիցիմ առաջի Տեառն (դ վահանայ)
սոն եղեալ որդի՝ (ազնուականի որդի,
մարդոյ զառակ, ժողովրդական ցարդ պա-
հուած բացատրութեամբ) իբրև զանգամ՝
որպէս մեծ առաքեալն Պօղոս »:

Փարպեցին Պօղոս Առաքելոյն խօսքը
իրեն կը յարմարցնէ, թեպէտե վահան իր
ազնուականութեան մասին տարբեր գա-
ղափար ունենայ: — Այսպէս ամէն բառ
այս պարբերութեան մէջ իր բնական դերը
կ'ունենայ:

Թէջ 610 Փարպ. կ'ըսէ.

« Այլ յաղագս իմաստաւոր բանի՝ ըստ
նորա Տեառն մեծին հրահանգին ». Հ. Ա-
զգերեան կ'ենթադրէ թէ սա թարգմանու-
թիւն է juxta ipsius Domini (ըստ
Տեառն ինքեին մեծի հրահանգին):

Նոյնի և նորա փոփոխակի սխալ գոր-
ծածութիւնը այնքան յաճախադէպ է հին